իսկապէս, պատրաստեն Անկելանոց և Որբանոց, աւելի օգտաւէտ և նպատակայարմար կը լինի, որով բազուեցիք մեծ լաւութիւն արած կ'լինին իրենց անկեալ, տկար և չքաւոր եղբարցն։

Բազուի երբեմն ազատիչ Թամարը, և Զիրուանի կոյս թագուհին որքան էլ վիպասանութիւն կամ բանաստեղծութիւն համարուին, բայց դարձեալ իբրեւ բարոյական խրատ և օրինակ կարեւոր համարեցի արտագրել այս տեղ։

Երբեմն (յամի Տեառն 1150 Հալէպի սուլթանը) պարսից Նուրէդդին շահը յարձակուելով Բազուի վրայ՝ կամենում էր գրաւել Բազուն «Եռակարգ ժանիքաւոր պարիսպներով պատած Բազուն, սեւ աշտարակներով ամրացած ծովեզերեայ ամուր Բազուն, կրակապաշտների սրբազան մայրաքաղաքը», որը իբր թէ Նուրէդդինի ժառանգութիւնն էր նախահայրերից մնացած։

Բայց կրակապաշտները հին հրէից օրինակին հետեւելով մի նոր Յուդիթի, — մի նոր Եսթերի ձեռքով — Թամարի ձեռքով սպանելով Նուրէդդինին՝ ազատեցին Բազուն պաշարումից և հալածական արեցին պարսից զօրքին։

Այսպէս գրէ և ասէ տեղական աւանդութիւնը։

Բազուի բերդի դրանց և աշտարակաց և խանի պալատաց վրայ թէեւ շատ արձանագրեր կան, և պէտք է օրինակել տայի, բայց կարդացողներն ըստ որում այն արձանագրերն միեւնոյն ժամանակի գրած և գործ լինել ասացին, ուստի միայն մեծ դարբասի ճակատի վրայ գրուած երկու բառերն օրինակել տուեցի, որով իմացւում է, որ բերդը շինուած է Շահ Արասի հրամանաւ. և այն երկու բառերն են՝

ԴԷՐՎԱԶԷԻ ՇԱՀ — ԱԲԱՍ

دروازه شاه عباس

Ըստ պարսկական սովորութեան ամեն նշանաւոր շինուածոց վրայ զոր օրինակ բերդերի, աշտարակների, մէջիդների են, գրուած են դուրանից աղօթքներ. այսպէս է և Բազուի բերդի ու պալատի վրայի գրուածները, ինչպէս ասացին։